ՄԱԼԻՇԿԱ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Գարիկ Նազարյան
Հեռախոս՝ +374 93956962

Մալիշկա գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի կենտրոնական մասում, պատմական Մոզ քաղաքի հարևանությամբ: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից հեռավորությունը 7 կմ է: Բնակավայրը փռված է Արփա գետի աջ ափին, շուրջ 250 հա-ի վրա: Վարչական տարածքը կազմում է 8330 հա, սահմանակից է Եղեգնաձոր և Վայք քաղաքներին, Գլաձոր, Վերնաշեն, Կարմրաշեն, Հեր-Հեր, Արին, Զեղեա և Ագարագաձոր գյուղերին: Գյուղի տարածքով է անցնում Հայաստան-Իրան միջպետական ավտոմայրուղին:

Գյուղը վերաբնակցվել է 1828-1831թթ. Իրանի Խոյ և Սալմաստ գավառներից ներգաղթված հայ ընտանիքներով: Այդ տարիներին վերաբնակեցվել է 42 ընտանիք: Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ:

Գյուղում գործում է 2 միջնակարգ դպրոց, 2 մանկապարտեզ, մշակույթի տուն, առողջապահական կենտրոն, առևտրի 20 կետ, զովացուցիչ ջրերի 2 փոքր արտադրամասեր, ապահովված է խմելու և ոռոգման ջրով: Գյուղի մոտ 25% - ը գազաֆիկացված է, խորհրդային տարիներին գյուղում գործել է կոնդեսատրների գործարան, շուրջ 600 աշխատեղով, որն այնուհետև վերափոխվել է թանկարժեք քարերի մշակման և ոսկու վերամշակման արտադրամասի, սակայն այսօր չի գործում:

Մշակույթի տանն է գտնվում գրադարանը, գործում են պարի, նկարչության, շախմատի, ըմբշամարտի, բոքսի և ֆուտբոլի խմբակներ:

Գյուղի տարածքը հարուստ է պատմամշակույթային հուշարձաններով, դրանցից են՝ գյուղի հին եկեղեցին, պատմական Մոզ քաղաքի դամբարանադաշտը, բազմաթիվ խաչքարներ:

Գյուղում 20-րդ դարում հուշարձան է կառուցվել, ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում զոհված մալիշկեցիների, իսկ այս պահին կառուցվում է Արցախյան պատերազմներում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:

Մալիշկայում ներկայումս գործում է սուրբ Աննա եկեղեցին, որի հարակից բարեկարգ տարածքը հարմարավետ հանգստի գոտի է դարձել բնակչության, առանձնապես, երիտասարդների համար:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 14 հուշարձան: